ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԵԼԵՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, մշակելով սովետական պետության ռազմատնտեսական քաղաքականությունը, կուսակցությունը ելնում էր Վ. Ի. Լենինի այն ցուցումից, որ «պատերազմում... տնտեսական կազմակերպությունը վճռական նշանակություն ունի» և որ եթե «գործը հասել է պատերազմի, ապա ամեն ինչ պետք է ենթարկել պատերազմի շահերին, երկրի ամբողջ մերքին կյանքը պետք է ենթարկել պատերազմին, այդ առթիվ փոքրագույն տատանումն անգամ անթույլատրելի է»[1]։

Երկրի ժողովրդական տնտեսության աշխատանքի վերակառուցումը գտնվում էր ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների Կենտկոմների ուշադրության կենտրոնում։ «Правда»-ն պատերազմի առաջին օրերին գրել է. «Արդյունաբերությունը ռազմաճակատի տեխնիկական ու նյութական բազան է։ Յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր ֆաբրիկա պետք է աշխատի ռազմական կարիքները բավարարելու համար»[2]։ Կուսակցության ղեկավարությամբ աշխատավորների անձնվեր գործունեության արդյունքը եղավ կարճ ժամանակամիջոցում վիթխարի պաշտպանական արդյունաբերության ստեղծումը։ Այդ գործում ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավարությամբ իրենց ավանդը մուծեցին նաև Հայաստանի աշխատավորները, այդ թվում նաև ինժեներատեխնիկական աշխատողները։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը և տեղական կուսակցական մարմինները, իրականացնելով ժողովրդական տնտեսության ղեկավարումը, մեծ նշանակություն էին տալիս ինժեներատեխնիկական մտավորականության գործունեությանը։ 1941 թ. հուլիսին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց «ՍՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1941 թվականի հունիսի 29-ի դիրեկտիվի անշեղ կատարման մասին»[3]։ Այդ որոշմամբ պահանջվեց, որ կուսակցական և սովետական մարմինների աշխատանքը ենթարկվի ռազմաճակատի շահերին։ Դրանում մեծ տեղ էր հատկացվում ինժեներատեխնիկական աշխատողներին։ Նրանց վրա էին դրվում արտադրության կատարելագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և թողարկվող արտադրանքի որակի բարելավման բարդ խնդիրները։ Պատերազմական ժամանակի դաժան

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 462, հ. 31, էջ 150։

2 «Правда», 10.VII.1941.

3 «Советская Армения в годы Великой Отечественной войны», сборник документов и материалов, Ереван, 1975, стр. 70—71.

պայմանները պահանջում էին միջոցներ գտնել հումքը և նյութերը խնայելու և ներմուծվող հումքը տեղականով փոխարինելու համար։ Այդ խնդիրների լուծմամբ զբաղվում էր Հայաստանի ինժեներատեխնիկական մտավորականությունը՝ կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ։ Դրա շնորհիվ արդեն 1941 թ. հուլիսին Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում կատարվում էր մոտ 80 տեսակի ռազմական պատվեր[4]։

Հետագա տարիներին ևս Հայաստանի արդյունաբերությունը կատարում էր Պաշտպանության պետական կոմիտեի բարդ և պատասխանատու առաջադրանքները։ 1942 թ. սկզբին, ավիացիոն արդյունաբերությունը կարբինոլով ապահովելու նպատակով, Պաշտպանության պետական կոմիտեն առաջարկեց Երևանի Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատում կազմակերպել կարբինոլի արտադրությունը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը կոմբինատի դիրեկցիային և կուսակցական կազմակերպությանը հանձնարարեց կարբինոլի արտադրամասի գործարկումն իրականացնել նույն թվականի փետրվարի 13-ին։ Այդ առաջադրանքը կատարվեց ժամկետից շուտ և 1942 թ. ապրիլ-մայիսին պահանջված 1200-ի փոխարեն ավիացիոն արդյունաբերության ձեռնարկություններին ուղարկվեց 1265 կգ կարբինոլ[5]։ Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատի փորձի հիման վրա կարբինոլ սկսեց արտադրվել նաև Հայաստանի մյուս գործարաններում։ ՀԿ(բ)Կ Կենտկոմն առանձնահատուկ նշանակություն էր տալիս ռազմական պատվերների կատարմանը և քաղաքային, շրջանային ու սկզբնական կուսակազմակերպություններից պահանջում էր «կոմունիստների, ինժեներատեխնիկական աշխատողների և յուրաքանչյուր բանվորի ուշադրությունը մոբիլիզացնել պղնձի, բյազի և առանձնապես կարբիդի գծով պլանների ամենօրյա կատարման պայքարի համար, որոնք ռազմական արդյունաբերության ձեռնարկություններին անհրաժեշտ մատակարարումների կարևորագույն տեսակներն են»[6]։

Հայաստանի քիմիական գործարանները կատարում էին նաև Պաշտպանության պետական կոմիտեի այլ առաջադրանքներ[7]։

Արդյունաբերական շինարարությունը մշտապես գտնվում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի ուշադրության կենտրոնում, և նոր ձեռնարկությունների ու արտադրությունների շինարարության բոլոր աշխատանքներն իրականացվում էին նրա ղեկավարությամբ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի XVII պլենումը (1944 թ. մարտ) որոշում ընդունեց «1944 թվականին արդյունաբերական շինարարության պլանի կատարման նախապատրաստման և ապահովման վիճակի մասին»։ Պլենումը կուսակցության քաղկոմներին և շրջկոմներին պարտավորեցրեց վերահսկողության տակ վերցնել արդյունաբերական շինարարության ընթացքը։ Ենթադրվում էր 1944 թ. իրականացնել 145 մլն ռ. արդյունաբերական շինարարություն։ Այդ գործում ՀԿ(բ)Կ-ն առանձնահատուկ նշանակություն էր տալիս ինժեներատեխնիկական աշխատողների մոբիլիզացմանը,

---

4 А. К. Григорянц, Формирование и развитие технической интеллигенции Армении, Ереван, 1966, стр. 219.

5 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), ֆ. 1, ց. 31, գ. 26, թ. 17, 94։

6 «Советская Армения в годы Великой Отечественной войны», стр. 162.

7 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ), ֆ. 711, ց. 2, գ. 2, թ. 12։

և Կենտկոմը կուսակցական կազմակերպություններից պահանջում էր «ինժեներատեխնիկական աշխատողների տեխնիկական միտքը մղել շինարարական պրոցեսների հետագա կատարելագործմանը»[8]։

Կազմակերպական բարդ աշխատանք կատարեցին № 772 գործարանի կուսակցական կազմակերպությունը, ինժեներատեխնիկական աշխատողներն ու բանվորները։ Պաշտպանության պետական կոմիտեի առաջադրանքով Երևանում կառուցվում էր կոմպրեսորային գործարան։ Գործարանի կառուցումը կապված էր մեծ դժվարությունների հետ, քանի որ զգացվում էր որակյալ աշխատուժի և անհրաժեշտ շինանյութերի պակաս։ 1944 թ. ապրիլի 15-ին գործարանում անցկացվեց կուսակցական ժողով, որտեղ որոշվեց մոբիլիզացնել բոլոր բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների ուժերը՝ առաջին փորձնական կոմպրեսորի թողարկման նախապատրաստական աշխատանքները հաջողությամբ կատարելու համար։ Բացի այդ, կազմակերպվեց սոցմրցում՝ խստորեն ստուգելով առաջադրանքների կատարումը։ Ստուգումները թույլ տվեցին ժամանակին բացահայտել թերությունները և միջոցներ ձեռք առնել դրանց վերացման համար։ Աշխատանքների այդպիսի կազմակերպման շնորհիվ 1944 թ. հունիսի 1-ին գործարանը թողարկեց առաջին փորձնական կոմպրեսորը[9]։

Պատերազմի տարիներին Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում կազմակերպվեցին նաև մի շարք այլ արտադրություններ։ Այսպես, «Պրոմտեխնիկա» գործարանում գործարկվեց ռետինե առարկաների արտադրամասը, պղնձի հանքաքարի հալումը ավելացնելու համար Շամլուղում տեղակայվեց տեսակավորման հարմարանք։ Ֆ. Է. Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանի բազայի վրա 1942 թ. կազմակերպվեց հաստոցաշինական գործարան։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ գործարանի վերակառուցման և մոնտաժային աշխատանքների կատարման համար այնտեղ ուղարկվեցին 11 մասնագետ ինժեներներ։ Վերակառուցման աշխատանքներում աչքի ընկան ինժեներներ Բ. Միլյուտենկոն, Ա. Սոչևը, Խաչատուրովը, Ադամյանը, Ա. Նավոյանը, Ա. Վիրաբյանը[10]։ Լենինգրադից, Վորոնեժից, Կալինինից և այլ քաղաքներից բերված սարքավորումների հիման վրա Լենինականի Մայիսյան ապստամբության անվան կոմբինատում մոնտաժվեց և շահագործման հանձնվեց ներկարարական ֆաբրիկան՝ խակի գույնի գործվածքի թողարկման համար։ Խոշոր կառույց էր Թումանյանի հանքաքարի բազայի վրա կառուցված հրակայուն աղյուսի գործարանը, որը շահագործման հանձնվեց արդեն պատերազմից հետո։

Պատերազմի տարիներին ՀՍՍՀ-ում գործարկվեցին մի քանի տասնյակ նոր խոշոր ձեռնարկություն և 110 արտադրամաս։ Ձեռնարկություններում յուրացվեց 300 նոր արտադրատեսակների արտադրությունը, որոնց մի մասը ուներ ռազմական նշանակություն[11]։ Այդ հաջողությունները շատ բանով պայմանավորված էին հանրապետության ինժեներատեխնիկական մտավորականության լավ աշխատանքով։

Արդյունաբերության բնագավառում պետական կարևոր առաջադրանքնե-

---

8 «Советская Армения в годы Великой Отечественной войны», стр. 272.

9 ՄԼԻ արխիվ, ֆ. 1895, ց. 1, գ. 1, թ. 4, 11, 13, 20, 23, 33, գ. 2, թ. 27, 28։

10 Նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 32, թ. 81—88։

11 «Советская Армения в годы Великой Отечественной войны», стр. 214—215.

րի կատարմանը զգալիորեն խանգարում էր ինչպես ինժեներատեխնիկական աշխատողների, այնպես էլ որակյալ բանվորների պակասը։ Բանն այն է, որ պատերազմի հենց առաջին ամիսներին տեխնիկական մասնագետների 35%-ը զորակոչվել էր բանակ։ Աշխատանքների ծավալի մեծացումը իր հերթին ավելի զգալի էր դարձնում մասնագետների պակասը։ Այսպես, 1945 թ. գարնանը հանրապետությունում կար 479 արդյունաբերական ձեռնարկություն՝ 1940 թ. 365-ի փոխարեն, իսկ ինժեներատեխնիկական աշխատողների թիվը նվազելով՝ 3000-ից հասել էր գրեթե 2000-ի[12]։ Արդյունաբերությունը որակյալ ինժեներատեխնիկական աշխատողներով ապահովելու համար ՀԿ(բ)Կ Կենտկոմը կուսակազմակերպություններին հանձնարարեց «ուժեղացնել սպասարկող անձնակազմի և ինժեներատեխնիկական աշխատողների հրահանգավորումը, անցկացնելով նրանց դիտելիքների սիստեմատիկ ստուգում»[13]։ Այդ որոշմանը համապատասխան իրականացվեց մասնագետների խիստ ընտրություն, և տեխնիկական մտավորականության 25%-ն ամրացվեց պաշտպանական ձեռնարկություններին։ Քիմիական արդյունաբերության ձեռնարկություններում տեխնիկական հագեցվածության և աշխատանքի մեքենայացման առավել բարձր մակարդակն ավելի մեծ թվով տեխնիկական կադրեր էր պահանջում, ուստի այնտեղ կենտրոնացած էր հանրապետության ինժեներատեխնիկական աշխատողների 40%-ը։ Մոտավորապես նույնքան ինժեներատեխնիկական աշխատողներ զբաղված էին լեռնահանքային և մետաղամշակման արդյունաբերության մեջ[14]։ Նոր կադրերի տեղաբաշխումը և նշանակումը ղեկավարում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմին առընթեր կադրերի բաժինը։ Միայն 1943 թ. բաժինը արդյունաբերության մեջ և տրանսպորտում ղեկավար աշխատանքի առաջ քաշեց 120 ինժեներատեխնիկական աշխատողների, արտադրամասերի պետեր նշանակվեցին 121, հանքերի վարիչներ՝ 16 հոգի։ Ֆ. Է. Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանի դիրեկտոր նշանակվեց Վ. Սարգսյանը, որի ղեկավարությամբ գործարանը սկսեց կատարել և գերակատարել պետական առաջադրանքները։ Մեխանիկական գործարանը դիրեկտոր Ա. Շտիկյանի ղեկավարությամբ յուրացրեց հատուկ արտադրանքի նոր տեսակի արտադրությունը։ Այդ արտադրանքն ուղարկվում էր ռազմաճակատ։ Ավտոնորոգման գործարանի դիրեկտոր նշանակվեց երիտասարդ ինժեներ Վ. Գյուլխանդարյանը, և գործարանը 1943 թ. պլանը կատարեց 179%-ով[15]։ Սակայն միայն այդ միջոցառումներով հնարավոր չէր վերացնել ինժեներատեխնիկական աշխատողների պակասը։ Դրությունը բարդանում էր նաև նրանով, որ կրճատվեց բուհերի շրջանավարտների թիվը։ Ինժեներատեխնիկական աշխատողների պակասը փոխհատուցվում էր որակավորման բարձրացման դասընթացների միջոցով։ Այդպիսի դասընթացներ էին գործում Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդիում։ Մինչև 1944 թ. հունիսը արդյունաբերության մեջ աշխատանքի ուղարկվեցին 110 այնպիսի մասնագետներ, որոնք նախկինում այլ աշխատանք էին կատարում[16]։ 1944 թ. հունիսին ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը կուսակցական ու սովետական մարմիններից և

12 А. К. Григорянц, նշվ. աշխ., էջ 214—215։

13 Նույն տեղում, էջ 211։

14 Նույն տեղում, էջ 217։

15 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 32, գ. 49, թ. 267—268, 270—271։

16 «Советская Армения в годы Великой Отечественной войны», стр. 279.

արդյունաբերության ղեկավար աշխատողներից պահանջեց «ամենօրյա և լուրջ աշխատանք տանել կադրերի հետ, հետևել նրանց սիստեմատիկ առաջքաշմանը, ճիշտ տեղաբաշխմանը, նրանց քաղաքական մակարդակի բարձրացմանը և աշխատանքի գործնական փորձի ընդլայնմանը»[17]։

Կուսակցության մշտական հոգատարության շնորհիվ Հայաստանի տեխնիկական մտավորականությունը, չնայած սակավաթվությանը, միանգամայն սարտունակ էր և պատրաստ կատարելու ամենաբարդ կազմակերպական-տեխնիկական առաջադրանքները։ Այդպիսի խնդիրներից էր, օրինակ, որակյալ բանվորական կադրերի պատրաստումը։ Հանրապետության խոշոր կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ ստեղծվում էին տեխմինիմումի խմբակներ և ստախանովյան դպրոցներ, որտեղ սովորում էին հազարավոր երիտասարդ բանվորներ։ Կուսակցության Երևանի քաղկոմի XIV պլենումը (1942 թ. մարտ) լսեց «Երևանի ձեռնարկություններում տեխնիկական ուսուցման վիճակի մասին» հարցը։ Նշերով ձեռք բերված հաջողությունները (մասնավորապես տեխմինիմումի խմբակների աշխատանքը Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատում), պլենումն ընդգծեց, որ ոչ բոլոր ձեռնարկություններում է այդ աշխատանքը դրված պատշաճ մակարդակի վրա և որոշում ընդունեց, որպեսզի ձեռնարկությունների ղեկավարությունն ուշադրությունը կենտրոնացնի բանվորների տեխուսուցման հարցի վրա՝ տեխմինիմումի խմբակները համալրելով ինժեներատեխնիկական աշխատողներից ընտրված որակյալ դասատուներով[18]։

Ղափանի պղնձահանքային կոմբինատում կուսբյուրոն տեխմինիմումի խմբակների աշխատանքի ղեկավարումը հանձնարարեց կոմունիստ ինժեներներին։ 1942 թ. մայիսի 13-ից սկսած այստեղ խմբակներ էին գործում 155 հոգու համար։ Այդ խմբակները ղեկավարում էին Ա. Համբարձումյանը, Ն. Պետրոսյանը, Գ. Գևորգյանը, Ա. Սուսլովը, Ա. Անտոնյանը, Ե. Կարապետյանը[19]։ Բացի այդ, կոմբինատի կուսբյուրոն պահանջում էր, որպեսզի արտադրամասերի պետերը նույնպես ղեկավարեն տեխմինիմումի խմբակների պարապմունքները և ավելի լրջորեն զբաղվեն տեխուսուցման հարցով[20]։

Լենինականի տեքստիլ կոմբինատի կուսակցական ընդհանուր ժողովի (1942 թ. հուլիս) բանաձևը պահանջում էր «ուժեղացնել բանվորների տեխնիկական ուսուցումը, լայնորեն ներգրավելով ինժեներատեխնիկական աշխատողներին» և «արտադրամասերի պետերին պարտավորեցնել անմիջականորեն պատասխանատու լինելու բանվորների տեխնիկական՝ ուսուցման վիճակի համար»[21]։

Ֆ. Է. Ձերժինսկու անվան գործարանում ևս տեխնիկական ուսուցումն ընթանում էր կուսակազմակերպիչների և արտադրամասերի պետերի անմիջական ղեկավարությամբ։ Գործարանի կուսբյուրոն լսում էր խմբակների ղեկավարների հաշվետվությունները և սիստեմատիկաբար ստուգում կադրերի պատրաստման աշխատանքի վերաբերյալ բյուրոյի որոշումների կատարման ընթացքը։ № 447 գործարանում ստեղծվել էր կադրերի պատրաստման բա-

17 Նույն տեղում, էջ 280։
18 ՄԼԻ արխիվ, ֆ. 47, ց. 2, գ. 115, թ. 216—218։
19 Նույն տեղում, ֆ. 621, ց. 1, գ. 39, թ. 43։
20 Նույն տեղում, գ. 47, թ. 44։
21 Նույն տեղում, ֆ. 213, ց. 1, գ. 82, թ. 33։

ժին։ Այն համալրված էր աշխատանքային փորձ ունեցող ինժեներատեխնիկական աշխատողներով, որոնք դասավանդում էին նաև գործարանին կից գործող արհեստագործական ուսումնարանում[22]։ Մինչև 1944 թ. ամառը անհատական ուսուցման, ստախանովյան դպրոցների և տեխմինիմումի դպրոցների միջոցով հանրապետությունում պատրաստվել էր 21.916 մասնագետ, իսկ միայն 1944 թ. տեխուսուցման խմբակներն ավարտել էր 2.083 բանվոր[23]։

Ինժեներատեխնիկական աշխատողների գործունեության մյուս բնագավառը արտադրատեսակների որակի բարելավումն էր, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության բարձրացման ու արտադրական պլանների կատարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը։ Այդ խնդիրը կատարվում էր ռացիոնալիզացման և գյուտարարության լայն կիրառման միջոցով։

Քանի որ հանրապետությունում չկային ռացիոնալիզատորական ու գյուտարարական աշխատանքները ղեկավարող հատուկ ղեկավար մարմիններ, ապա ռացիոնալիզատորական շարժումը ղեկավարելու ամբողջ ծանրությունն ընկնում էր կուսակցական կազմակերպությունների վրա։ Աշխատանքի արտադրողականության բարձրացման, հումքի և նյութերի խնայողության հարցերը հաճախ դառնում էին կուսակցության Երևանի ու Լենինականի քաղկոմների և շրջանային կուսկազմակերպությունների քննարկման առարկա։ Ըստ որում, հատուկ ուշադրություն էր դարձվում արտադրության ռացիոնալիզացմանը և այդ աշխատանքի կազմակերպման ամբողջ պատասխանատվությունը դրվում էր ինժեներատեխնիկական աշխատողների վրա։ Կուսակցության Երևանի Լենինյան շրջկոմի կոնֆերանսի (1943 թ. հունիս) բանաձևում առաջարկվում էր պահպանել տեխնոլոգիական ռեժիմները և դրանք կատարելագործել ռացիոնալիզացման ու գյուտարարության միջոցով[24]։ Իսկ կուսակցության Երևանի քաղկոմի պլենումը (1944 թ. մայիս) նշեց, որ հատկապես ինժեներատեխնիկական աշխատողները պետք է զբաղվեն առաջարկությունների կենսագործման և արտադրության կատարելագործման ուղղությամբ տեխնիկական միջոցառումների կազմակերպման հարցերով[25]։ Պատերազմի հենց առաջին օրերից արդյունաբերական ձեռնարկությունների սկզբնական կուսկազմակերպությունները ձեռնամուխ եղան ռացիոնալիզատորական և գյուտարարական աշխատանքների ղեկավարմանը։ 1941 թ. հոկտեմբերին Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատի կուսբյուրոն ինժեներատեխնիկական աշխատողների հետ խորհրդակցություն անցկացրեց, որտեղ քննարկվեց «Ռացիոնալիզատորների և գյուտարարների աշխատանքները պատերազմի տարիներին» հարցը։ Կուսբյուրոյի առաջարկությամբ ինժեներատեխնիկական աշխատողներից ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ դեֆիցիտային նյութերի փոխարինման և առանձին պրոցեսների մեքենայացման հարցում ռացիոնալիզատորներին օգնություն ցույց տալու համար։ Այն գլխավորում էր կոմբինատի կուսբյուրոյի քարտուղարի տեղակալ Գ. Հակոբյանը[26]։ Հանձնաժողովը լույս ընծայեց հատուկ թեմատիկ պլաններ, որոնցում մատնա-

22 Նույն տեղում, ֆ. 1887, ց. 1, գ. 24, թ. 9, 10, ֆ. 3649, ց. 1, գ. 19, թ. 17—21։

23 «Советская Армения в годы Великой Отечественной войны», стр. 279 .

24 ՄԼԻ արխիվ, ֆ. 47, ց. 2, գ. 212, թ. 88։

25 Նույն տեղում, գ. 217, թ. 121։

26 Նույն տեղում, ֆ. 102, ց. 1, գ. 149, թ. 4։

նշվում էին արտադրության առավել թույլ տեղերը և դրանով իսկ ռացիոնալիզատորների միտքը նպատակամղվում էր այդ պրոբլեմների լուծմանը[27]։ Հաճախ կոմբինատի կուսակազմակերպությունը և ղեկավարությունը ինժեներներին տալիս էին արտադրության կարիքների հետ կապված հատուկ առաջադրանքներ։ Այսպես, օրինակ, 1942 թ. կոմբինատում անհրաժեշտություն առաջացավ տեղում ստանալու կալցինացված սոդա։ Այդ աշխատանքը կարող էին կատարել միայն բարձրորակ մասնագետները։ Կուսակցական բյուրոն այդ գործը հանձնարարեց ինժեներներ Թևոսյանին, Ռաֆայելյանին և Սերբուլովին։ «Բ» բաղադրամասին փոխարինող Տկվիբուլիի ածխի բրիկետների պատրաստման աշխատանքը ինժեներ-քիմիկոս Վ. Մարկինի ղեկավարությամբ կատարում էին ինժեներներ Զ. Վլասյանը և Ռ. Մելիքյանը[28]։ Կոմբինատի ինժեներատեխնիկական աշխատողները մեծ աշխատանք կատարեցին նաև տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման ուղղությամբ։ Այսպես, օրինակ, ինժեներ Ռ. Մելիքյանը դեռևս պատերազմի սկզբին կուսբյուրոյին խնդրեց իրեն ուղարկել ետ մնացող Շ—6 արտադրամասը։ 1941 թ. վերջին չորս ամիսներն այդ արտադրամասը փակել էր 1 մլն 400 հազ. ռ. վնասով։ 1942 թ. Ռ. Մելիքյանի կազմած նոր սխեմայով արտադրամասի աշխատանքի շնորհիվ գործարանը ստացավ 19.828.930 ռուբլու շահույթ։ Սարքավորումը առավել լրիվ չափով օգտագործելու ուղղությամբ մեծ աշխատանք կատարեց IV—2 արտադրամասի վարպետ Հակոբյանը։ Նրա ռացիոնալիզատորական առաջարկության շնորհիվ վառարանի արտադրողականությունն ավելացավ երկու անգամ[29]։

Կոմբինատում ռացիոնալիզատորական շարժման վիթխարի դերի մասին են վկայում հետևյալ թվերը. 1942 թ. սկզբից մինչև 1943 թ. հունիսն արվել է 150 առաջարկություն, որոնցից 57-ը ներդրվել է արտադրության մեջ և տվել մոտ 2 մլն. ռ. շահույթ[30]։ Ռացիոնալիզատորական շարժման մեջ ինժեներատեխնիկական աշխատողների առաջատար դերի մասին է խոսում նաև այն, որ կոմբինատում եղած 100 ռացիոնալիզատորներից 78-ը ինժեներներ և տեխնիկական մասնագետներ էին[31]։

Ռացիոնալիզատորական աշխատանքը հաջողությամբ էր իրականացվում նաև հանրապետության մյուս ձեռնարկություններում։ Այսպես, օրինակ, Ֆ. Է. Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանում յուրացվեց մի շարք այնպիսի գործիքների թողարկումը, որոնք նախկինում ստացվում էին այլ քաղաքներից։ Աշխատանքի արտադրողականության բարձրացման հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով գործարանի կուսակցական կազմակերպությունը ստեղծեց առաջարկություններն ուսումնասիրող հանձնաժողով։ Գործարանի ինժեներատեխնիկական աշխատողների (Բ. Միլյուտենկո, Մ. Պուխալսկի) ջանքերով 1943 թ. հալոցային արտադրամասն անցավ հեղուկ վառելիքի օգտագործմանը[32]։

Ռացիոնալիզատորների գործունեության շնորհիվ մեծ հաջողություններ

---

27 Նույն տեղում, ֆ. 47, ց. 2, գ. 119, թ. 34։

28 Նույն տեղում, ֆ. 1, ց. 31, գ. 287, թ. 9, գ. 370, թ. 14—15, 30։

29 «Սովետական Հայաստան», 29. III. 1943, «Коммунист», 28.III.1943.

30 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 32, գ. 370, թ. 30։

31 Նույն տեղում, ֆ. 1, ց. 32, գ. 370, թ. 30։

32 «Սովետական Հայաստան», 26. V. 1943։

ձեռք բերեցին նաև Ղափանի պղնձահանքային կոմբինատի աշխատողները։ Այստեղ կուսակցական բյուրոյի ղեկավարությամբ ստեղծվել էր ռացիոնալիզացման և գյուտարարության բյուրո, որը քննարկում էր ստացված առաջարկությունները և դրանցից առավել արժեքավորները երաշխավորում արտադրության մեջ ներդնելու համար։ Պատերազմի մեկ տարուց էլ պակաս ժամանակի ընթացքում արտադրության ռացիոնալիզացման շնորհիվ կոմբինատն ունեցավ մոտ 2 մլն ռուբլու շահույթ։ Լենինյան հանքի պետ Ս. Գրիգորյանն արեց 10 առաջարկություն, որոնցից 8-ի ներդրումը միայն 10 ամսվա ընթացքում տվեց 112 հազ. ռ. շահույթ[33]։ 1941 թ. փետրվարին կոմբինատի կուսբյուրոն տեխնիկական անձնակազմին հանձնարարեց գտնել հանքաքարից պղնձի կորզման բարձրացման միջոցներ։ Այդ առաջադրանքի կատարման գործում կարևոր դեր խաղաց ֆլոտացիոն ֆաբրիկայի աղացների բեռնիչ հարմարանքի փոփոխման վերաբերյալ գլխավոր մեխանիկ Ս. Բլուդովի առաջարկությունը։ Հաջողությամբ իրականացվեց նաև մեխանիկ Ա. Պողոսյանի առաջարկությունը, որը նույնպես բարձրացնում էր հանքաքարից պղնձի կորզման տոկոսը[34]։

Կիրովականի քիմիական կոմբինատում ինժեներատեխնիկական աշխատողների ներգրավումը ռացիոնալիզատորական շարժման մեջ իրականացվում էր տեխնիկական կոնֆերանսների միջոցով։ Կոմբինատի կուսբյուրոյի անդամների մասնակցությամբ անցկացնում էին գյուտերի ամենամսյա ստուգատեսներ, որոնց ընթացքում ընտրվում էին առավել արժեքավորները։ Բացի այդ, գյուտարարների համար կազմակերպվում էին տեխնիկական կոնսուլտացիաներ։ Կոմբինատի կուսբյուրոյի անմիջական ղեկավարությամբ ինժեներատեխնիկական աշխատողների ջանքերի կարևոր արդյունքն էին հումքի նոր տեսակների յուրացումն ու ներդրումը[35]։

Նույն պրոբլեմները հաջողությամբ լուծում էին նաև Երևանի ավտոդողերի գործարանի ռացիոնալիզատորները։ Գործարանում ավտոդողերի պատրաստումը հումքի պակասի պատճառով դժվարացել էր։ Այդ իսկ պատճառով գործարանի լաբորատորիայի պետ Դավրիշչուկի ղեկավարությամբ այնտեղ աշխատանքներ կատարվեցին տեղական հումքի կիրառմամբ ավտոդողեր պատրաստելու ուղղությամբ, իսկ տեխնիկական բաժնի պետ Բոյախչյանն ու գլխավոր ինժեներ Սուսլյակովն իրականացրին արտադրության փոխադրումը նոր տեխնոլոգիայի[36]։

Քանաքեռի հէկում ևս մեծ ուշադրություն էր դարձվում տեխնոլոգիայի կատարելագործման պրոբլեմներին։ Հէկի դիրեկտոր Գ. Տեր-Ակոպովը մշակեց առաջին հերթի տուրբինների բանող անիվների արդիականացման նախագիծ, որով առանց մեծ ծախսերի կայանի հզորությունը մեծացվեց 11 մեգավատտով։ 1943 թ. հէկում արվել է 15 ռացիոնալիզատորական առաջարկություն։

Պաշտպանական կարևոր պատվերներ էր կատարում Լենինականի մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատը։ Արդեն 1941 թ. կոմբինատի կոսկոմիտեն գլխավոր ինժեներ Արտյոմենկոյից և ռացիոնալիզացիայի

33 Նույն տեղում։
34 ՄԼԻ արխիվ, ֆ. 621, ց. 1, գ. 37, թ. 88, ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 549, ց. 3, գ. 25, թ. 5։
35 ՄԼԻ արխիվ, ֆ. 378, ց.1, գ. 8, թ. 106։
36 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 596, ց. 1, գ. 41, թ. 18։

ու գյուտարարության գծով պատասխանատու Սապոժնիկովից պահանջեց հանգես բերել ավելի մեծ նախաձեռնություն, մշակել թեմատիկ պլան և գյուտարարների հետ խորհրդակցություն անցկացնել 1942 թ. խնդիրների շուրջը[37]։

Գործարանում ռացիոնալիզատորական շարժման ընդլայնման գործում մեծ նշանակություն ունեցան կուսակցության Լենինականի քաղկոմի «Համամիութենական սոցիալիստական մրցության ծավալումը տեքստիլ կոմբինատի կուսակցական կազմակերպության կողմից ղեկավարելու մասին» և «Տեքստիլ կոմբինատում «տեքստիլ արդյունաբերության ձեռնարկությունների աշխատանքի բարելավման մասին» Պաշտպանության պետական կոմիտեի որոշումը իրականացնելու ընթացքի մասին» որոշումները[38]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը մեծ նշանակություն էր տալիս ռացիոնալիզատորական աշխատանքի կազմակերպմանը ոչ միայն առանձին ձեռնարկություններում, այլև հանրապետության մասշտաբով։ Այդ կապակցությամբ ՀԼԿԵՄ Կենտկոմին առընթեր ստեղծվեց ռացիոնալիզատորներին և գյուտարարներին աջակցող բյուրո, իսկ 1942 թ. ՀՍՍՀ ԺողկոմխորհՀ որոշում ընդունեց «Տեխնիկական կատարելագործումների, գյուտերի և ռացիոնալիզատորական առաջարկությունների համար պարգևատրելու մասին»[39]։

Արդյունաբերական արտադրության կատարելագործման հարցում հանրապետության ինժեներատեխնիկական աշխատողներին մեծ օգնություն էին ցույց տալիս գիտնականները։ 1941 թ. նոյեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի և գիտական հիմնարկությունների ղեկավարությանը հանձնարարեց գիտահետազոտական աշխատանքը ի տպաս դնել ռազմաճակատի կարիքներին «արդյունաբերության ագրեգատների լրացուցիչ կարողությունների հայտնաբերմանը, հումքի այնպիսի նոր տեսակների ուսումնասիրմանը և հայտնաբերմանը, որոնք կարողանան փոխարինել դրսից բերվող հումքին, արդյունաբերության և գյուղատնտեսության թափոնների և օժանդակ նյութերի ուսումնասիրմանը՝ երկրի կարիքների համար արտադրանքի նոր տեսակների արտադրության նպատակով»[40]։ Այդ որոշումը դարձավ հանրապետության գիտական ուժերի գործունեության ծրագիրը։ Ղեկավարվելով այդ որոշումով, ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ինստիտուտները կապ հաստատեցին արդյունաբերական ձեռնարկությունների հետ։ Այսպես, օրինակ, քիմիայի ինստիտուտը աշխատանքային պլանի մեջ մտցրեց մի շարք այնպիսի արտադրական թեմաներ, որոնք կապված էին Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատի աշխատանքի հետ։ Կոմբինատի ինժեներատեխնիկական աշխատողներին մեծ օգնություն ցույց տվեցին քիմիկոսներ Վ. Իսագուլյանը և Օ. Չալտիկյանը։

Գիտական և արտադրական խնդիրների միավորման գծով ինստիտուտների աշխատանքը ղեկավարում էր ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի կուսկազմակերպությունը։ 1942 թ. ապրիլի 21-ին կուսակցական ընդհանուր ժողովում բոլոր ինստիտուտներին կոնկրետ առաջադրանքներ տրվեցին։ Առանձնապես պատասխանատու խնդիրներ դրվեցին երկրաբանների ու քիմիկոս-

---

37 Նույն տեղում, ֆ. 213, ց. 1, գ. 79, թ. 4։

38 Նույն տեղում, ֆ. 46, ց. 5, գ. 275, թ. 2, գ. 187, թ. 60։

39 Նույն տեղում, ֆ. 48, ց. 5, գ. 422, թ. 204—205։

40 Նույն տեղում, ֆ. 1, ց. 30, գ. 20, թ. 18։

ների առջև։ Երկրաբանության ինստիտուտի աշխատանքը պլանավորվեց երկու ուղղությամբ՝ գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների հումքային բազայի ընդլայնում և հազվագյուտ մետաղների հայտնաբերում։ Ժողովը ինստիտուտին հանձնարարեց նաև հետևել տորֆի կոքսացման նոր եղանակի արմատավորմանը։ Երկրաբանները որոշակի հաջողություններ ձեռք բերեցին մի շարք ապարների ուսումնասիրության գործում[41]։ Քիմիայի ինստիտուտին հանձնարարվեց հատուկ ուշադրություն դարձնել երկրաբանության ինստիտուտի հայտնաբերած հումքի մշակմանը[42]։ Քիմիայի ինստիտուտի աշխատակիցներ Դարբինյանը և Քանքանյանը աշխատանքներ էին կատարում մագնիումի և ալյումինի հումքի ուսումնասիրության ուղղությամբ[43]։ 1942 թ. ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի կուսբյուրոն ամփոփեց արտադրության մեջ մի շարք գիտահետազոտական աշխատանքների ներդրման առաջին արդյունքները[44]։

1943 թ. ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմավորմանը զուգընթաց ուժեղացան հետազոտությունները քիմիայի, երկրաբանության և մյուս գիտությունների բնագավառում։ ՀՍՍՀ էներգասիստեմի զարգացման համար մեծ նշանակություն ունեին ջրային սիստեմի և հիդրոտեխնիկական կառույցների արդիականացման աշխատանքները, որոնք Ի. Եղիազարովի ղեկավարությամբ իրականացվում էին ջրաէներգետիկայի ինստիտուտում։ Շինանյութերի ինստիտուտում կատարվում էին տեյսմոլոգիայի, ինժեներական կոնստրուկցիաների ուսումնասիրությունները և այլն։ 1944 թ. մարտին ՀԿ(բ)Կ Կենտկոմը արդյունաբերական շինարարության պլանի կատարումն ապահովելու համար ինստիտուտին հանձնարարեց «միջոցառումներ մշակել տեղական շինանյութերն առավելագույն չափով օգտագործելու ուղղությամբ»[45]։

ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղում և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում իրականացված մի շարք գիտական աշխատանքներ պաշտպանական կարևոր նշանակություն ունեին։ Դրանց թվում էր պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը, որն առաջ էր քաշվել ակադեմիկոս Վ. Համբարձումյանի կողմից և կիրառական նշանակություն ուներ ռազմական գործում։

Կարևոր աշխատանքներ կատարվեցին նաև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում։ Ընդհանուր քիմիական տեխնոլոգիայի ամբիոնում Ա. Գասպարյանի ղեկավարությամբ մշակվում էր «Գազանման քլորաջրածնի մաքրումը» թեման, որը գործնական նշանակություն ուներ։ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ամբիոնում աշխատում էին տեղական հումքից ալյումինի օքսիդ ստանալու պրոբլեմի վրա, որի լուծումը կրկնակի նշանակություն ուներ՝ վերանում էր ալյումինի օքսիդը դրսից բերելու հարցը և հնարավորություն էր ստեղծվում օգտագործելու Տկվիբուլիի ածխի մոխիրն ու նեֆելինասիենիտային, լեյցիտային ու անդալուզիտային ապարները, որոնց պաշարները մեծ էին հանրապետությունում[46]։

Ալավերդիում արտադրվող ազոտաթթվի թափոններից պոլիտեխնիկա-

---

41 Նույն տեղում, ֆ. 427, ց. 1, գ. 9, թ. 8—9։
42 Նույն տեղում, ֆ. 1, ց. 32, գ. 46, թ. 165։
43 ՀՍՍՀ ՀՀՍԵՊԿԱ, ֆ. 113, ց. 18, գ. 241, թ. 11։
44 Մլի արխիվ, ֆ. 427, ց. 1, գ. 9, թ. 17։
45 «Советская Армения в годы Великой Отечественной войны», стр. 272.
46 ՀՍՍՀ ՀՀՍԵՊԿԱ, ֆ. 113, ց. 9, գ. 4, թ. 2։

կան ինստիտուտի լաբորատորիայում 1943 թ. ստացվեց սելեն, որը որպես վուլկանացնող աղդակ[47] օգտագործվեց Երևանի ավտոգողերի գործարանում։

Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի և մաթեմատիկայի ամբիոններում հետազոտություններ էին կատարվում փորձնական ֆիզիկայի բնագավառում։ Հաշվի առնելով պետհամալսարանի ֆիզիկայի լաբորատորիայի աշխատանքների ծավալը, 1943 թ. հունվարին ՀՍՍՀ ժողկոմխորհը որոշում ընդունեց ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետին կից ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտ ստեղծելու մասին։

Պատերազմի տարիներին Հայաստանի գիտնականները վիթխարի ավանդ ներդրեցին արդյունաբերության և տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման ասպարեզում և էապես նպաստեցին հանրապետությունում մի շարք նոր ձեռնարկությունների ստեղծմանը։

Մասսաների դաստիարակության ձևերից և պատերազմի տարիներին հանրապետության արդյունաբերության առջև ծառացած խնդիրների կատարման ուղղությամբ իրականացվող միջոցառումներից էր սոցիալիստական մրցությունը։ Արդեն 1941 թ. աշնանը Ֆ. Է. Ձերժինսկու անվան գործարանում, Ղափանի պղնձահանքային կոմբինատում, Լենինականի տեքստիլ կոմբինատում և հանրապետության մյուս ձեռնարկություններում սոցիալիստական մրցություն ծավալվեց տարեկան առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար։

1942 թ. ամբողջ երկրով մեկ ծավալվեց սոցիալիստական մրցություն։ Դրա նախաձեռնողները դարձան Կուզբասի մետալուրգները։ Նրանց դիմումը լայն արձագանք գտավ Հայաստանի աշխատավորների շրջանում։ Արդեն 1942 թ. մայիսին Ղափանի պղնձահանքային կոմբինատում կազմվել էր սոցիալիստական մրցության պայմանագրի նախագիծ։ Կուզբասցիների դիմումը քննարկեցին մի շարք ձեռնարկությունների բանվորները, ինժեներատեխնիկական աշխատողներն ու ծառայողները և նույնպես ներգրավվեցին համամիութենական սոցիալիստական մրցության մեջ[48]։

1942 թ. մայիսի վերջին կուսակցության Երևանի քաղկոմի պլենումը քննարկելով քաղաքի ձեռնարկություններում կուսակազմակերպությունների կողմից սոցմրցման ղեկավարման հարցը, նրանցից պահանջեց ակտիվորեն ղեկավարել մրցությունը[49]։ Պլենումում նշվեց Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատում մրցության կազմակերպման ուղղությամբ կատարվող աշխատանքը։ Հայաստանի ձեռնարկությունների սոցիալիստական մրցության ծավալման արդյունքներն ամփոփեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի XI պլենումը (1942 թ. հուլիս)։ Այն սկզբնական կազմակերպությունների առջև խնդիր դրեց ապահովել բոլոր բանվորների ընդգրկումը մրցության մեջ։ Ինչպես նշվեց պլենումում, ինժեներատեխնիկական աշխատողները պարտավոր էին առաջին հերթին «ուշադրությունը կենտրոնացնել աշխատատեղերը ժամանակին նախապատրաստելու, տեխնոլոգիական ռեժիմը բարելավելու և արդյավորման պարապուրդ առաջացնող պատճառները վերացնելու հարցի վրա»[50]։ Պլենումը սկզբնական կուսակազմակերպություններից պահանջեց ինժեներատեխնիկական աշխատող-

47 Նույն տեղում, ֆ. 596, ց. 2, գ. 40, թ. 18։

48 Նույն տեղում, ֆ. 3649, ց. 1, գ. 4, թ. 41, գ. 6, թ. 1։

49 Նույն տեղում, ֆ. 47, ց. 2, գ. 117, թ. 491։

50 «Советская Армения в годы Великой Отечественной войны», стр. 162.

ներին լայնորեն ընդգրկել մրցության մեջ և նրանց ուժերը նպատակամղել աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը։

Համամիութենական սոցմրցման ընթացքում մեծ նշանակություն էր տրվում միջարտադրամասային, միջբրիգադային և անհատական պայմանագրերի կնքմանը։ Այսպես, օրինակ, կուսակցության Լենինականի քաղկոմի պլենումը (1944 թ. օգոստոս) առաջարկեց այնպես կազմակերպել մրցությունը, որպեսզի բոլոր արտադրամասերն ու բրիգադները մրցեն միմյանց հետ և մրցության ընթացքում սիստեմատիկ կերպով ստուգվի պարտավորությունների կատարումը։ Պլենումը ինժեներատեխնիկական աշխատողներից պահանջեց մրցությունն օգտագործել աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։ Քաղկոմի պլենումից հետո տեքստիլ կոմբինատում կնքվեց 1601 պայմանագիր (170-ը՝ ինժեներատեխնիկական աշխատողների և ծառայողների կողմից)։ Տեխնոլոգիական պրոցեսները բարելավելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու պարտավորությունները ստանձնեցին ինժեներներ Ադամյանը, Գուսևը, Պողոսյանը, վարպետներ Դավթյանը, Կիկոյանը, Սատաևը և Ավետիսյանը[51]։ Միջարտադրամասային և անհատական պայմանագրերի կնքման պրակտիկան հաջողությամբ էր կիրառվում նաև հանրապետության այլ ձեռնարկություններում[52]։

1942 թ. սեպտեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմը կազմակերպեց արդյունաբերական ձեռնարկությունների դիրեկտորների, տեխնիկական ղեկավարների և սկզբնական կուսակազմակերպությունների քարտուղարների խորհրդակցություն, որտեղ քննարկվեցին նախահոկտեմբերյան սոցիալիստական մրցության կազմակերպման հարցերը[53]։

Շատ ձեռնարկություններում մրցության կազմակերպման և պարտավորությունների կատարման գործում եղած հաջողություններն ապահովվում էին ինժեներատեխնիկական աշխատողների ակտիվ մասնակցության շնորհիվ։ Այսպես, օրինակ, հանքախորշի վարիչ Գ. Սարգսյանի և տեխնիկական ղեկավար Մ. Աղախանյանի հմուտ ղեկավարման շնորհիվ Ստ. Շահումյանի անվան հանքախորշի կոլեկտիվը ժամկետից երկու ամիս շուտ կատարեց 1942 թ. առաջին կիսամյակի պլանը[54]։ Կիրովականի Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատում ուժ ու եռանդ չխնայելով էին աշխատում ինժեներներ Աֆոնինիկովը, Վոլկովը, Ղարագյոզյանը, իսկ նրանց ղեկավարած արտադրամասերը մշտապես հաջողության էին հասնում մրցության մեջ։ Կոմբինատի կուսբյուրոն նրանց էր վստահում առավել պատասխանատու առաջադրանքների կատարումը։ Օրինակ, մեծ Հոկտեմբերի 25-րդ տարեդարձի առթիվ սոցիալիստական մրցության պայմանագրում նրանց էր հանձնարարվել տեղական հումքից արտադրանքի թողարկման յուրացումը, հատուկ լատունե սալիկների ձուլումը և այլն[55]։ Ջերժինսկու անվան գործարանի ձուլման արտադրամասի պետ Ստեփանյանը մրցության ընթացքում կարողացել էր այնպես կազմակերպել աշխատանքը, որ ձուլման ժամանակ բանվորներն

51 Նույն տեղում, ֆ. 213, ց. 1, գ. 82, թ. 104, 113։
52 Նույն տեղում, ֆ. 47, ց. 2, գ. 271, թ. 60։
53 «Коммунист», 7.IX.1942.
54 Նույն տեղում, 28. IV. 1942։
55 ՄԼԻ արխիվ, ֆ. 373, ց. 1, գ. 20, թ. 56։

աշխատում էին 24—30 ժամ՝ դուրս չգալով արտադրամասից[56]։ 1945 թ. ապրիլին գործարանի կուսակցական կազմակերպության ժողովը քննարկեց Սովետական Հայաստանի 25-ամյակի առթիվ սոցիալիստական մրցության պայմանագիրը, որտեղ հատուկ հանձնարարություններ էին նախատեսված գործարանի ինժեներատեխնիկական աշխատողների համար։ Այսպես, օրինակ, ինժեներ Զամալինին, Շատվորյանին, Առաքելյանին հանձնարարվել էր մինչև 1945 թ. մայիսի 15-ը ավարտել երկու հաստոցների հավաքումը և դրանք ներկայացնել պետական հանձնաժողովին, ձուլման արտադրամասի պետ Ն. Ստեփանյանը պետք է յուրացներ կոկիլային ձուլումը, արտադրության պետ Բ. Շատվորյանը պետք է ապահովեր տաք դրոշմոցումը, գործարանի գլխավոր ինժեներին հանձնարարվել էր գլխավորել ռացիոնալիզատորական աշխատանքը[57]։

Սոցիալիստական մրցության կազմակերպման ժամանակ կուսակցական կազմակերպություններն առանձնակի նշանակություն էին տալիս նրա հրապարակայնությանը, պարտավորությունների կատարման համար աշխատավորներին մոբիլիզացնելու նպատակով ագիտացիոն-մասսայական աշխատանքի անցկացմանը, ինչպես նաև սոցպայմանագրերի կատարման ստուգմանը։ Այդ պահանջներն ընդգծվեցին նաև կուսակցության Երևանի քաղկոմի պլենումի (1944 թ. մայիս) որոշումներում, որտեղ մատնանշվեց, որ հրապարակայնությունը հարկավոր է ոչ միայն առաջավորների փորձը ցույց տալու, այլև վատ աշխատողների շուրջը հասարակական կարծիք ստեղծելու և դրանով իսկ նրանց աշխատանքի բարելավմանը հասնելու համար[58]։ Այդ աշխատանքն իրականացնում էին ոչ միայն սկզբնական, այլև քաղաքային ու շրջանային կուսակցական կազմակերպությունները։ Այսպես, օրինակ, կուսակցության Երևանի Լենինյան շրջկոմի բյուրոյում (1942 թ. հունիս) քննարկվեց «Խրոմպիկ գործարանի կոլեկտիվի կողմից վերցված պարտավորությունների կատարման վիճակի մասին» հարցը։ Այդ գործարանը տեխնիկական թույլ ղեկավարության պատճառով շրջանի ձեռնարկությունների սոցիալիստական մրցության արդյունքներով գտնվում էր 9-րդ տեղում։ Դրությունը շտկելու համար բյուրոն առաջարկեց առաջին հերթին գործարանում կազմակերպել պարտավորությունների կատարման ստուգում[59]։

Յուցադրական ագիտացիան, ռացիոնալիզատորների և ստախանովականների հավաքները, ձեռնարկություններում անցկացվող ագիտացիոն-մասսայական աշխատանքը նպաստեցին առաջավոր փորձի տարածմանը։ Լավ արդյունքներ էին տալիս նաև աշխատանքի կազմակերպման հասարակական ստուգումները։ Այսպես, Լենինականի Լուկաշինի անվան մանվածքային ֆաբրիկայում ինժեներատեխնիկական 14 աշխատողներից կազմված հանձնաժողովը ստուգատեսն անցկացնելու ժամանակ լուծեց մեքենաների վրա դատարկ իլիկների պտույտի վերացման պրոբլեմը։ Կուսակցության Երևանի Լենինյան շրջկոմի կազմակերպած ստուգատեսից հետո շրջանի ձեռնարկություններում երևան եկած հնարավորությունների օգտագործման միջոցով ազատվեց 240

56 «Советская Армения в годы Великой Отечественной войны», стр. 307.

57 Մշի արխիվ, ֆ. 1887, ց. 1, գ. 24, թ. 17, 18։

58 Նույն տեղում, ֆ. 47, ց. 2, գ. 271, թ. 118։

59 Նույն տեղում, գ. 145, թ. 184։

բանվորական ձեռք։ Ֆ. Է. Ձերժինսկու անվան գործարանում աշխատանքի արտադրողականության բարձրացման հնարավորություններն ուսումնասիրելու համար կուսբյուրոն ինժեներատեխնիկական աշխատողներից ստեղծեց բրիգադներ, որոնք նախապես կազմված հարցաթերթիկով արտադրամասերում անցկացրին աշխատանքի կազմակերպման ստուգատեսներ։ № 447 գործարանում սուգատեսի ընթացքում արմատավորվեց բարձրության ղեկի հավաքման նոր եղանակ, որի շնորհիվ հավաքման ժամանակը կրճատվեց՝ 18-ից հասնելով 9 ժամի[60]։ Ինժեներատեխնիկական աշխատողների կողմից կազմակերպական տեխնիկական միջոցառումների անցկացումը, որոնք ապահովում էին անցումը բազմահատոց սպասարկմանը և մասնագիտությունների համատեղումը՝ նպատակ ունենալով ազատել բանվորական ձեռքերը և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, արժանացավ նաև կուսակցության Երևանի քաղկոմի 1944 թ. մայիսին կայացած պլենումի հավանությանը։

Վերոհիշյալ կազմակերպական-տեխնիկական միջոցառումները, որոնք կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ անց էին կացնում ինժեներատեխնիկական աշխատողները, թույլ էին տալիս պայքար մղել աշխատաժամանակի կորուստների դեմ, ավելի լրիվ օգտագործել սարքավորումը և պայմաններ ստեղծել աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի ինժեներատեխնիկական մտավորականությունը, ՀԿ(բ)Կ ղեկավարությամբ, ակտիվորեն ներգրավվեց ժողովրդական տնտեսության ռազմական ձևով վերակառուցման և սովետական պաշտպանական արդյունաբերության հետագա զարգացման ու կատարելագործման ծրագրի կատարման գործում։ Ինժեներատեխնիկական աշխատողները մասնակցում էին նոր ձեռնարկությունների ստեղծմանն ու ռացիոնալիզատորական շարժմանը, կազմակերպում էին սոցիալիստական մրցությունը և տարածում առաջավոր նախաձեռնությունները։ Կուսակցական կազմակերպություններին է պատկանում բանվոր դասակարգի գիտության և տեխնիկայի սիրությունն ստեղծելու ծառայությունը, միությունը, որի առջև, ինչպես ասել է Վ. Ի. Լենինը, «չի դիմանա ոչ մի մութ ուժ»[61]։ Այդ միության մեջ զարգացման կարևոր դեր էր խաղում ինժեներատեխնիկական մտավորականությունը։

ИНЖЕНЕРНО-ТЕХНИЧЕСКАЯ ИНТЕЛЛИГЕНЦИЯ СОВЕТСКОЙ АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

ЕЛЕНА ВАРДАНЯН

Резюме

Великая Отечественная война стала суровым испытанием всей экономической системы социалистического государства. В перестройке народного хозяйства на военный лад, в выполнении оборонных заказов,

60 «Սովետական Հայաստան», 3.I.1942, Մլի առխիվ. ֆ. 47, ց. 2, գ. 271, թ. 120, ֆ. 1887, ց. 1, գ. 24, թ. 22, ֆ. 3649, ց. 1, գ. 15, թ. 24։

61 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 512։

повышении производительности труда, изыскании новых резервов производства большую роль сыграла инженерно-техническая интеллигенция страны, в том числе и Армянской ССР. Под руководством партийных организаций инженерно-техническая интеллигенция республики в годы войны развернула большую и плодотворную деятельность по освоению производства новых видов изделий, в том числе боеприпасов и вооружений, развертыванию социалистического соревнования в промышленности, подготовке кадров квалифицированных рабочих. Инженерно-техническая интеллигенция республики явилась также застрельщиком широкого развертывания на промышленных предприятиях Армении движения рационализаторов и изобретателей, которое в условиях войны весьма способствовало совершенствованию технологии, экономии сырья и материалов, повышению производительности труда.